



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

469

854

442

2010

596



Запись ред с Г.Ф.



ԹԱԹԱԽՄԱՆ ԳԻՇԵՐԸ

1010
406580

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

801

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսես Վարդանեանցի.
1903

Дозволено Цензурою. 18 Апрѣля 1903 г. Тифлисъ.



854-2010

\$ 850

Բարձր սարի տափակ գագաթի ծայրին, ուր
բարձրութիւնը դէպի վեր ձգուելուց նեղացած՝ ըս-
կըսում է կարուել, ցած իջնել և բարկացած՝ մի
ահազին, սաբսափելի ձոր է փռում իր կրծքի առաջ,
կանգնած է Տաթելի վանքը:

Կանդնած է նա անսասան։ Բարձրացրել է իր
երկայն և մեծ գմբէթը, ամուր հիմք է դրել լեռնա-
դաշտի ծայրին և հազար տարիներ վերցրած իր ու-
սերի վրայ՝ ճակատ է տնկել անհուն դարերին, անեղ
երևոյթներին։ Նրա բարձր ու սուր գլխին ցցած
ու երկաթէ խաչը հազար տարի է որ օր ու գիշեր
խաչակնքում է շորս կողմի աշխարհը։ Հեռու տեղե-
րի վրայ է տարածում այդ մեծ նշանի տիրապե-
տութիւնը, իզուր չէ նա այնքան բարձր տեղ նստել,
և իզուր չեն նրա առաջ այնքան ցածրացել, խոր
ընկել ձորեր, ձորեր, ժայռոտ, անյատակ և անմատ-
չելի ձորեր։

Մարդիկ շինեցին Ասութու այդ մեծ տաճարը: Բայց միայն մարդիկ չէին որ հազարամետայ կեանք պահպանեցին նրա ուսերի վրայ: Ահեղ ու կոպիտ տեսարաններով հրաշճներ գործող բռնութիւնը այդքան ժամանակ սիրել է նրան, պահել է իր ծոցում: Սիւնեաց աշխարհի սարերը, այդ անհիւրասէր, վիթխարի բարձրութիւնները, որոնք տարին տասներկու ամիս կռւում են երկնքի ամպերի հետ, նրա անխոնջ պահպաններն են: Դրանք շղթայ կա-

պած, շար ընկած են միմեանց դէմ ու դէմ և շատ
լաւ են փակում այն սարը, որ հասակով փոքր է
նրանցից և Տաթեր իր զիսի վրայ կրելու պաշտօնն
ունի: Այդ լեռնաշղթաները ներքում շատ են մի-
մեանց ներհակ, շատ են սիրում առաջ գնալ, իրար
մօտենալ, գոռող և հպարտ կրծքները վեր տանել,
խրոխտալ. կարծես ուզում են միմեանց վրայ ընկ-
նել, միմեանց ջարդել, փշրել: Եւ եկել են, մօտե-
ցել. Քիչ, շատ քիչ է մնում, որ միմեանց ուսեր ել-
նեն, հասնեն երկնքին. բայց Որոտանը՝ Սիւնեաց
աշխարհի հրաշալի գետը, լեռնային կատաղութիւն-
ների այդ ահարկու քասաի մէջն ընկած, պտտում
է տոչորուելով, աղաղակում է, ծկթում, այս ու այն
շղթայի ոտներն է լիզում և հեռու է պահում նրանց:
Իսկ սարերը, մշուշապատ սարերը, շատ չեն ականջ
դնում կայտառ ջրերի մունչիւնին և, ինչպէս անդպայ
տիտաններ, երբեմն հեռացած, երբեմն մօտ եկած՝
իրանց յախտենական գործն են կատարում, խնամ-
քով են շըջափակում Տաթեր:

Գոռող բարձրութիւնների պաշտպանութիւնը
քիչ է երեացել Սիւնեաց աշխարհի բնութեան, և խո-
րութիւնը եկել է, բոլորուել է վանքի շուրջը. դա
անդունդների մի շղթայ է, մի ձոր է, որ ահուելի
բերան է ուղղել դէպի վեր, դէպի լեռնային երկին-
քը. տնը այդ բերանին հազարներ, նա կը կլանէ և
գարձեալ սոված կը մնայ: Մարդն էլ բերել է, այդ
ձորի բաշով հաստ պարիսապ է կանգնեցրել, շըջա-
պատել է վանքը, ծածկել է հեռուից նայողի աշրից
նրա կոկած, յոկած, գերեցիկ մարմինը:

Եւ այդքան շըջապատների մէջ վսեմ, հպարտ
է Տաթեր: Կարծես ամեն ինչ—սար, ձոր, պարիսապ
սիրու է տալիս նրան՝ այդքան երկար, այդքան վըս-

տահ նայել հեռու: Նա նայում է, վախեցնում է ա-
մեն մէկին, հիացնում է, բայց ինքը չի վախում: Ո՞չ
մի բանից չի վախում: Լեզապատառ ջըեր են վազում
մույլ ձորերի միջով, ամենի սարերի կրծքից ժայ-
ռեր են կախ ընկել, մութ ու թանձը անտառները
ծածկել են սարերի գագաթները. վազում են արիւ-
նարբու գագանները, երկինքը շանթեր է կոտրա-
տում, դղրդացնում է սար ու ձոր. պտտում են
գայլի անկուշտութիւնից տանջուող և արեան ծարաւ
աւազակների խմբերը. Բայց Տաթեր—Տաթե է:

Այդտեղ ենք մենք թաթախման օրը մի
հին, մեզանից հեռու գնացած ժամանակ, երբ
թուքերն էին մեր երկրի տէրը:

Բ.

Ապրիլ է. գարնան օրը գնալով՝ մօտենում է
վերջին:

Հրաշալի՛ է Սիւնեաց գարունը: Երկինք ու եր-
կեր ոչինչ չեն խնայում, որ այդ վլթիարի լեռնե-
րը, այդ անդունդներն ու լանջերը պճնուին, զար-
դարուին, սրբան իրանց է հաճելի: Այդտեղ են ծա-
ղիկները հրաշքի տեսարաններ փռում, ծլում, ծաղ-
կում են անխոնջ, զարդարում են հողը, քաղցրաց-
նում են տաւարի ու ոչխարի կաթը: Այդտեղ դրդն-
շում են գետերը, կարկաչում են գետակները, փըր-
փըրում են գահավիժուող առուները, համեստ քշշում
են պարզ, անոյշ, անմահական աղբիւրները: Երամ
երամ կղղում են կաքաները, մոշահաւը իր սուր,
կրակոտ հնչիւններով զարթեցնում է ամբողջ
լուռ ձորը անօգուտ քնից: Վազում են եղնիկները,
բարակ ու սիրուն տոտիկներով կոլս են տալիս ան-

ծայր ծաղկաստանները, համատարած փափուկ ու թաւ խոտք: Գարնան հրաշագործ օդը աղմկում է այդ սիրուն կենդանիների բառաշխններից, որոնց բարակ արձագանքը պատրաստ են յետ տալ այնքան շատ, այնքան անժիշտ ժայռերն ու բարձրութիւնները: Ծառ, թռուփ, անպիտան մացառ և չոր ու վտիտ փուշ կանաչում են, հազնւում: Խոկ ամենից քաղցր, ամենից գեղեցիկ լեռնային արեւ կարմրացնում է մարդկանց թշերը, պնդացնում է նրանց ոտքն ու ձեռքը: Միայն խրօստ Գաղքէն է *) ձմեռնայինի պէս մնում, միայն նա է, որ չի ուզում վերցնել իր սպիտակ գլխարկը, և քաղցրիկ արեգակը դեռ շատ պիտի կրակ թափէ նրա գլխին, որ կարողանայ այդ ձիմեղին գլխարկն էլ վերցնել:

Քնել է ուզում գարնան բնութիւնը: Զորերի յատակում հետզհետէ թանձրանում է երեկոյեան մուլյը, արեգակը այժմ սարի գլխին է կանգնել և այնտեղից է ժապում իր բոլոր անհամար ճառագայթներով. Նա քիչ կանգ է առել այդտեղ, ուզում է քաղցր հրաժարական ողջոյն տալ իր շինած, սարքած, զարդարած աշխարհին:

Բայց մենակ այդ բարեւ չէ արեգակի ժապիտը, Այդ օրը նա ուրիշ մի քաղցր ողջոյն էլ պիտի տայ: Եթ մօր ծոցը մտնելիս պիտի յայտնէ բոլոր հայ քրիստոնեաններին, որ Զատիկ է, թաթախման ժամ է: Մինչև նա չը հաւաքէ, չը հեռացնէ իր երկայն, փայլուն ճառագայթները, մինչև որ չը յայտնէ, թէ ինքն իրանը արեւ, վերջացրել է, բարեւ մնան ամենքը մինչեւ միւս առաւտ, կարմիր տօնը, կարմիր ձուն չը պիտի կարողանան մարդկանց սիրալ

լայնացնել, ուրախացնել: Այդ ուրախութեան, այդ կարմրին երկար են սպասել մարդիկ, և այժմ գեղեցիկ արեգակը չափազանց գանգաղ է շարժւում, չափազանց շատ է երկարացնում Զատիկը շարաթ օրը: Նախանձնում է երկնքի լուսառում: Գուցէ զիտէ նա, որ իր արած բոլոր բարձրները այնքան չեն յուսագրել, չեն ուրախացրել անտէր որբին, որքան այն կարմիր ձուն, որ պիտի մի տխուր ժպիտ խլէ անմիթար սպառորի բերանից այն ժամանակ, երբ ինքը, արեւ, մօր ծոցում ծածկուած կը լինի:

Գնում է արեգակը, և ահա հանդարտ ու զով օդը սասաիկ գողում է Տաթիկի փոքրիկ զանգակներին հասցըրած հարուածներից: Պղնձի ձայնը դողալով, երերալով՝ տարածում է, թռչում հեռու, ամեն տեղ. և երբ շատ է հեռանում, վախվախելով՝ կարծես աւջեկի ճանապարհը շշափելով՝ մարում է, քսում ձորերի գլխին, սարեւի լանջերին.

Սատուծու լայն և արձակ տունը լցուել է մարդկանցով. բարձր ու գեղեցիկ կամարների տակ, վերջապէս, իրարանցումը տեղի տուեց կարգ ու կանոնին: Բարձրացաւ երգեցողութեան ձայնը, բուրգառները ծանր չըլսկալով խնկի ծուխն են մլացնում: Պատարագն սկսուել է:

Պ.

Հալիձորցի Թաթոսը պատի տակ է կանգնել, ամենքից յետոյ: Այդտեղից նայում է մեծ բազմութեանը, որի մեծ մասը հեռու տեղերից եկած ուստառորներ են. նայում է բեմին, տեսնում է, թէ ինչպէս է պատարագը կատարուում, և հիացել է:

Նա երեսուն հինգ տարեկանից աւել չէր լինի.

*) Լեռնային դադար Տաթեւի հանդէս:

կարճահասակ, բաւական տգեղ էր. մէջքը քիչ կոր, վիզը կարճիկ: Աշխատաւոր մարդ էր: Տարուայ մեծ մասը տանից, տեղից հեռու էր լինում, տաւարի ու ոչխարի հետ էր ապրում, մանաւանդ լաւ որսորդ էր: Նա հազած էր կոպիա բրդի մոխրալոյն չուփա, ունէր մի մեծ բրդոտ փափախ, որ միշտ նրա ածիլած գլխի վրայ էր լինում նստած, իսկ այժմ ընկած էր նրա ոտների մօտ:

Թաթոսը իր կեանքում առաջին անգամն էր տեսնում այսպիսի բազմութիւն, այս տեսակ չքեղ հանդէս: Լեռների ու ձորերի որդին այդ օրը եկել էր Տաթե, որովհետև ուխտ էր արել թաթախման օրը ծոս պահել և երեկոյին հաղորդուել: Այդ ուխտը արել էր մի ծանր փորձանքից ազատուած ժամանակը:

Զարմացած, պլշած նայում էր Թաթոսը: Պատարագիչն էր Սիւնեաց արքեպիսկոպոսը, որին սպասաւորում էին չորս վարդապետներ: Պայիրները ծանր, խորհրդաւոր կերպով երգում էին և քշոցների մեղմ շնչխոցները, երբեմն և զանգակի ծանր հարուածները ահ ու դող էին գցում Թաթոսի սիրուը: Ազգեպիսկոպոսը մի ալեսոր, բարձրահասակ ծերունի էր, որ արտասանում էր աղօթքները խորին ջերմեռանդութեամբ: Երբ նա դառնում էր զէպի ժողովուրդը, խաչակներով «բրազագութիւն» էր ասում, ամենքը, բացի Թաթոսից, խոնարհ զլուխ էին իջեցնում, երեսները խաչակնքում և յետոյ նուաստ ու հանդարտ կերպով շարժում էին, միմեռնց նայում: Թաթոսն էլ ուղում էր այգակս անել. այդպէս անելը շատ լաւ էր, հոգու թիթեռութիւն էր: Բայց չէր կարողանում. ինքն իրան չէր դանում, կորցրել էր, կարծես թէ նոր էր աշխարհ եկել և նոր էր մարդ ու եկեղեցի տեսնում:

Ամաչում է Թաթոսը. ուսերը ներս քաշած, վախվախելով է նայում աղօթող բազմութեանը. նա հաղարից մի անգամ է իր գէմքը խաչակնքում, այն էլ այնպիսի ժամանակ, երբ գէպի իր կողմը նայող մարդ չը կար: Նրա ուշքն ու միտքը մանաւանդ գրաւել են երկու մարդիկ. մէկը զափանցի Աւթանդիլ տանուաէրն էր, միւսը՝ զնէրի Մելիք-Միհրանը: Երկուսն էլ հազած էին իրանց թանկագին հագուստները, երկուսն էլ բարձրահասակ, գեղեցիկ աղամարդիկ, հարուստ, հացաշատ իշխաններ, որոնք լաւ անուն ունին հեռաւոր տեղերում: Դեռ երեկ էին այս տեղացիք լսել, թէ զրանք զալիս են վանքը ուխտ, բերում են իրանց ընտանիքները, մեծ պատրաստութիւն ունին կեր ու խումբ համար: Ի՞նչպէս ջերմեռանդ, տաք-տաք աղօթում էին նրանք: Ջուտ շուտ ծունք էին դնում, զլուխները երկար ժամանակ գետնին դրած պահում, հառաշանքով աղօթքներ միմնջում:

Եւ Թաթոսը չը գիտէ, թէ ինչպէս արտայայտէ իր սրտի անսահման բերկուութիւնը: Նա կաշկանդուած է մնացել. և միայն պլշած աշքերն են, որ մարդու սքանչացումն են յայտնում: Երկը իշխանները այդպէս կանգնած են իր հետ մի յարկի տակ. այդ զօրեղ, մեծ մարդիկ այնքան ջերմեռանդ աղօթում են. ամեն ինչ գեղեցիկ, ամեն ինչ սիրուն է: «Ճէ՛ր Աստուած,—մաքում կանչում է Թաթոսը,—աշխարհումս մենք մինչև այժմ ի՞նչ ենք իմացել, ի՞նչ քաղցրութիւն ենք տեսել: Ահա Աստուածու մարդիկը, զրանք են մեր պարծանքը, դրանք պիտի ամենից առաջ գնան: Ճէ՛ր Աստուած, երկար կեանք տնը մեր իշխաններին».

Արտասունքը կարծես շարժում է նրա աշքե-

բում, թուում է թէ լացն է գալիս Աստուծու այդ ողորմութիւնից: Խեղճի սիրաը նոր է մի քաղցրութեան համ առնուում: Նա մտարերում է պատճառը, որ նրան սարերից ու ձորեցից բերել է այստեղ, այս բոլոր բաները ցոյց է տալիս: Դա, այդ պատճառը, փոքրիկ, գանգրահեր մի երեխայ է: Այս բաղմութեան մէջ էլ Թաթոսի ականջներին է հասնում երեխայի քաղցրիկ ձայնը. «աղու-դու», կանչում է երեխան, իր վորսիկ ոտներով վազվում է, մօր գիրին է ընկնում, մօր գրկից հօր մօտն է վազում: Թաթոսը սիրում է իր երեխային, իր կեանքից շատ է սիրում: Բայց աղօթել նրա համար չի կարողանում. նրա սիրաը լցուած է, միայն իշխաների մասին է խօսում, դրանք, այդ մեծ մարդիկ, աղօթում են ամենքի համար. դրանք իրանց շուաքում կը պահեն աշխարհը, մեծին ու փոքրին: Դրանք վանքի համար լաւ լաւ ընծաներ են բերել. ինչեր էին պատմում մի ժամ առաջ: Աւթանդիլը, ասում էին, յիսուն հատ լաւ սինի է բերել, տուել վանքին և խոստացել է մի լաւ այգի էլ նուիրել: Խոկ Մէլիք-Միհրանը էկուց առաւօտ մի ջուխտ արջառ պիտի մորթէ, մատաղ անէ և մի մեծ, գեղեցիկ արծաթի խաչ պիտի զնէ սեղանում: Այս թաթախման երեկոյի ժամ-պատարագը Աւթանդիլի համար է, իսկ Զատիկ առաւօտուայ պատարագը Մէլիք-Միհրանի համար: Էլ ինչ ասէր Թաթոսը, նա զգում է, որ ինքը ոչինչ է, խեղճ մարդ, բայց այդպիսի իշխանների հպատակ մարդ է: Բաւական է, չէն մնայ Աստուծու տունը, նա ուրիշ բան չի ուզում. իոնարհ սրտի մէջ սիւն է դաւանում հպատաւթիւնը, որ այդ իշխանների փառքից է գոյանում. մի հատ գլուխը, որ ունի Թաթոսը, նուիրած է դրանց. Եւ

նա իրան հաստատ խօսք է տալիս ամեն մեծ, նշանաւոր օր այդպէս գալ, կանգնել, տեսնել: Տեսնել Աստուծու տաճարը, խունկի բուրմունքը, լսել քաղցը երգերը և փառք տալ. «Տէ՛ Աստուծ, պահիր մեր մեծերի կեանքը»:

Եւ երբ մի մի նրա աշքը իշխաններից անցնում էր գէտի սեղանը, երբ նա տեսնում էր, թէ ինչպէս պատարագիշը, խոնարհ երկրպագութիւն անելով, խնկարգում էր, տեսնում էր, թէ ինչպէս արևգակի վերջին շողերը՝ բարձր գտբէթի պատուհաններով ներս մտած՝ շողշողում էին սրբատաշ քարերի վրայ, սուրբ պատկերների հեղ գէմքերն էին լուսաւորում, իսկ իննի ծուխը բարակ քուլաններով բարձրանում էր գէտի այդ լոյսը, ոլորտում էր նրա մէջ, այդ ժամանակ նրա սիրաը թրթուում էր, պատուել էր ուրում հրճուանքից. Նրա մարմնի մէջ տարածում էր մի սառն գողզ, արտասունքները գալիս էին, մօտենում նրա աշքերին և էլի յետ զառնում:

Պ.

Հասաւ այն ըսպէն, երբ զբառումն էլ մարդ չի մնում. ծառայ, ժամկոշ մտնում են եկեղեցի, կանգնում են դրան չէմքի մօտ, նայում են սեղանին և ջերմեռանդ աղօթում:

Ամենքը չոքել էին: Կատարւում էր վերաբերում: Դպրապեաը մեղմ երգում էր մենակ. քշոցները բարակ խշում էին. մի վարդապետ՝ սկիհը ձեռին՝ ծանր, դանդաղ առաջ էր գնում և երկու բուրգառներ անդադար խունկ էին ծխում սկիհի առաջ: Չոքած մարդիկ անշարժացել էին, հողով ու մտքով վերացել էին: Իշխանները գլուխ ճկած՝ խո-

նարհ ու աղաշաւոր դէմքները դարձրել էին դէպի սեղան. երբեմն նրանց թևերը տարածւում էին, երբեմն ձեռքը զարնուում էր կրծքին և զլուխը խոնարհ կախ էր ընկնում կրծքի վրայ, իսկ չըթունքները մեղմ շարժւում էին, աղօթում: Երբեմն լուսմ էր գլուխապետը, և սկիհը տանող վարդապետը կանգնուում էր, մի բան ասում, ապա շարունակում ծանր գնալ: Գլուխապետն էլի բարձրացնում էր ձայնը, քշոցներն էլի մեղմ ու հանդարտ խշում էին:

Այդ միջոցին մի քանի հատ մարդիկ մտան վանքը: Մտան և չը կանգնեցին, գտակները չը վերցրին, այլ սաստիկ արագութեամբ առաջ գնացին, կոխ տալով մարդկանց, եթէ միայն կոխ տային, շատերը չէին տեսնի նրանց. այսպիսի տօն օրերը եկեղեցում, խիստ բազմութեան մէջ, միմեանց հրհրելը, կոխ տալը սովորական բան է: Բայց այդ մարդիկ դինուորուած էին. և մտակներով, սրերի կոթերով հարուածներ էին թափում աջ ու ձախ:

Նրանց ճանաշեցին: Ժողովուրդը խառնուեց, բարձրացաւ աղմուկ, որ խլացընց երգեցողութիւնը. Պատարագիչ արքեպիսկոպոսը յետ նայեց, քարացաւ ահից. սկիհ բերող վարդապետը ձեռքերը ցածրացրեց, կանգնեց: Մի և նոյն ժամանակ գռնով ներս էին թափում նոր մարդիկ:

Քրանք թուրքեր էին...

Սարսափն ու ահը հալածեց, դուրս արաւ Տաթէկի գեղեցիկ կամարների տակ հաւաքուած այնքան սուրբ, հեղ ուրախութիւնը, թաթախման երեկոյի ուրախութիւնը: Նրա փոխարէն այդ հին կամարները թնդացին մի վայրենի, բարձր աղաղակից, և ձայները միանգամայն կտրուեցան: Աղաղակեց թուրքերի խանը: Եւ իսկոյն նրա հատ եկած մար-

դիկ դէս ու դէն ընկան, սկսեցին սուր բանեցնել ժողովրդի վրայ: Աղօթող ամբոխը մոլորուած, խելքը կորցրած, փոթորիկի հանդիպած: ոչչալների նման դէս ու դէն էր վազում, բայց վնալու տեղ չէր գտնում. պատ և պատ էր տեսնում իր աշքերի առաջ, Զատերը վազեցին, բեմը վեր եւան. պատարագիշը վայր ընկաւ և սկսեց լաց լինել: Բայց բեմն էլ չը խնայեցին. այնտեղ էլ հասան թուրքերը, հանգցըն ճրագները, տակն ու վրայ արին ամեն ինչ:

Թուրքերը լաւ էին իմացել ժամանակը: Աւազակ խանը վազուց էր աշք զրած Տաթէկի հարստութիւններին, վազուց էր ուղում ջորիներով արծաթ ու պղինձ տանել այդտեղից: Զատկից էլ ինչ յարմար ժամանակ: Հասարակ օրերը վանքի արծաթի և ոսկի անօթները, թանկագին գոհարներով՝ զարդարած զգեստները գաղած, ծածկուած էին ստորերկրեայ զադտնարաններում: Իսկ այդ օրը տարուայ ամենամեծ տօնն էր կատարուում. և գեռ առաօտից վարդապետներն ու արքացուները դուրս էին բերել թանկագին զարգերը և խնամք ու ջանք չէին խնայել տաճարը նրանցով զարդարելու համար: Ոչ ոք չը գիտէր, որ այդ իսկ օրը լեռնային ոլորմոլոր կածաններով ձիաւորներ են գալիս դէպի վանքը և շատ շտապում են:

Ողբում, հեծում էր ժողովուրդը. վիրաւորուածները վայ էին կանչում. հայհոյանքները խառնուել էին աղաշանք պաղատանքի հետ: Եւ լայն, գեղեցիկ շինութիւնը թնդում էր, կարծես ուղում էր ճաքուել, տրաքուել, փուլ գալ: Կարծես չարշարակի գիշեր էր, կարծես մայր մտած արեգակը չէր ասել, թէ հայերը պիտի թաթախուեն, պիտի

ուրախանան ամենքից շուտ, որովհետև Աստուծու
Որդին ջարդել է խաւար գժոնքը, հալածել է մժու-
թեան ողիները, յարութիւն է առել.

Յանկարծ այդ բազմութիւնը, այդ յուսակտուր
ամբոխն ընկաւ, տարածուեց գեանի վրայ. վիզները
երկարացան, աղեկտուր աղաղակները միացան: Եւ
միմիայն մի աղաչաւոր, օրհասական աղաղակ էր
լուսում.

—Գթութիւն, գթութիւն...

ՀԱՐՄԱԿԱՆԻ Ե.

Թաթոսը պատին կպած էր մնացել: Նրա պըլ-
շած աշքերը տրաքում էին, դէմքի երակները ու-
ռել էին, հաստացել: Այս ինչ արին. ուր կորան մի
ակնթարթում այն գեղեցիկ բաները, որոնք նրա
սրտի մէջ էին նստել և այնքան դողոց էին պատճա-
ռում նրան:

Հէնց սկզբից նա նայում էր իշխաններին: Տե-
սաւ, որ նրանք, թուրքերին տեսնելուն պէս, վազե-
ցին, խանի ուներն ընկան, և խանը մի երկու ան-
գամ քացի տուեց նրանց գլուխներին, կապել տուեց
նրանց ոտքն ու ձեռքը: Թաթոսի սիրտը մի բան
շատ խիստ և խոր ծակեց: Նա բաց արաւ բերանը,
մի բան ասաց, բայց ով էր նրան լսողը. նրա ձայնը
կորաւ յուսահատ աղաղակների մէջ: Այնուհետև նա
տեսաւ, որ թուրքերը բեմի վրայ հանում են արք-
եպիսկոպոսի զգեստը. նրանցից մէկը ճմլեց, ծալծլեց
և իր թեի տակը կոխեց եպիսկոպոսական թագը,
որի վրայ թանկագին քարեր էին պատպում. իսկ
միւսը ձեռքն առաւ սկիհը, թափեց նրա մէջ եղած
սուրբ հեղուկը, զցեց փոքրիկ խորչինի մէջ, որ

կախ արած էր գոտուց: Այն իսկ սկիհն էր, որ
մինչև թուրքերի գալլ այնքան փառքով ու պա-
տուով բերում էր վարդապետը, այն իսկ սկիհը, որ
Թաթոսի սիրտը ահ ու զող էր զցել, որից ամենիցը
մասն պիտի առնէին եօթը շարաթ՝ պաս պահելուց
յետոյ:

Եւ ցաւը, սաստիկ ցաւը, կարծես, ճգեց նրա
սիրտը: Նա ոռնաց. երկու կաթիլ արտասունք ըն-
կան նրա աշքերից. նա վերցրեց իր վափախը, թափ
տուեց և ձեռքի մէկը զրպանում դրած՝ գնաց դէ-
պի վանքի դուռը: Մի թուրք շէմքի վրայ բռնեց
նրա օձիքից և միւս ձեռքով սուրբ բարձրացրեց:
Թաթոսը ձկուեց, երկարացաւ, երեք մատով բռնեց
թուրքի բարձրացրած ձեռքը, այնովէս հուալ տուեց
երեք մատով, որ թուրքի սուրբ վայր ընկաւ. եր-
կուսը միմեանց խտակցին, քիչ կռուեցան և երկու-
սըն էլ վայր ընկան: Թաթոսը հանեց զրպանից դա-
նակը և իր շրթունքները կծած՝ խոր իրեց դանա-
կը թուրքի կրծքի տակ: Երբ դուրս էր գալիս վան-
քից, նրա ականջին հասաւ աղերսական աղաղակը.

—Գթութիւն, գթութիւն...

Նա խելագարի պէս վաղեց մտաւ վանքի բազ-
մաթիւ սենեակներից մէկը, վերցրեց այդտեղ ըն-
կած իր մի հատիկ վերաբկուն, ձեռքով չօշափեց,
գտաւ վերաբկուի տակ դրած սուրբ, որը խնամքով
կապեց իր մէջքին: Ապա դուրս թռաւ, բարձրացաւ
տան կտուրը, ցատկեց ընկաւ միւս կողմը և շտա-
պով դիմեց դէպի ծաթե գիւղը: Նա դողում էր,
կարծես չերմում էր և շուտ շուտ կրկնում էր.

—Դալի-Փարսադան, Դալի-Փարսադան, ախ,
եթէ տանը կը լինես... Գայլ հօ չի կերել քեզ, կաց,
գալիս եմ...

Պ.

Երեկոյ է, գալնանային թարմ, անոյշ երեկոյ։ Մութը կովակը է ամեն տեղ. նիրհում է Սիւնիքի հսկայ բնութիւնը, ամեն ինչ հանգիստ է, անվադով։ Աստղերը հեղու ու մունջ ճպճպում են բարձրից Տաթևի վանքի վրայ, ճպճպում են և կարծես ծանր ու ցուրտ արտասունքի կաթիւներ են մի մի ցած զլորում այն խեղճերի վրայ, որոնք փռուած են վանքի բակում։

Տաթևի դրսի մեծ գոների վրայ կայ մի փոքրիկ եկեղեցի։ Այդ եկեղեցու առաջ, հարապարակում, թափուած է մեծ վանքից դուրս արած ամբոփը։ Այդտեղ վանքի աղքիւրը ամեն օրուայ պէս մեղմ ու հանդարտ քշչում է, իսկ պարսպի տակ փափուկ գորգի վրայ նոտած է թուրք խանը։ Կառուած է մի հատ խարոյկ, որ արդէն մոռացուել է. և նոտաղ ու բարակ բոցերը թութառում են, մի երերուն, դողող լուսով լուսաւորում են տեսակ-տեսակ դէմքեր և խանի կնճռոտ, մաղձոտ դէմքն ու հինայով ներկած նօսը ու սրածայր միրուքը։

Դեռ նոր էին բեւնած ջորիներ ու վարկել վանքից. իսկ խարոյկի մօտ գեռ կուտուած էր վանքի անօթների, թանկագին զգեստների մի կոյտ։

Խանը բարկացած էր, ուզում էր ինքն իրան ուտի։

Ամեն մէկի գլխագինն էին որոշում. Կամ այսքան ոսկի տնը, կամ թէ գլուխից։ Ամենից առաջ Աւթանդիլ տանուտէրի և Մէկի-Միհրանի գլուխներն էին գնահատել, վերջացըրել։ Մնում էր գինը տակ և կապանքներից աղատուել։ Սակարկութիւնը

կեռ երկար պիտի տևէր. խանը շատ էր գնահատում, իսկ վրկանք տուողները գետնաքարը սողում էին, աղաչում էին պակասացնել գլխագինը։

—Հա, —յանկարծ գոռաց խանը, —Ասադը, Ասադը... տուէք ինձ իմ ամենալաւ մարդը. . .

Թուրքերից միայն մէկն էր սպանուել և դա՝ Ասադն էր. Գին էին անում Ասադի արիւնը. Կթէ վճռուած գինը չը տային, 12 լաւ տղամարդկանց արիւն պիտի թափուէր, որ խանի սիրտը հովանար։

—Ո՞վ սպանեց նրան. գտէք, տուէք ինձ. ես նրա միսը կտոր կտոր պիտի վերցնեմ ատամներով։ տուէք, չներ, խոզի ճտեր . . .

Խանն այնքան բորբոքուած էր, որ տեղից կանգնեց, երկու քայլ առաջ գնաց և ոտք գետնին խփեց։

—Ողորմութիւն արա, —լալահաւաշ ձայն արձակեց թափուած ամբոփը։

—Զնւտ, հա, թէ չէ բոլորիդ, բոլորիդ կը կոտորեմ։ Ցղերը, —ասաց նա իր մարդկանց, —սնը պատրաստեցէք։

Բազմութեան մէջ մի խուլ, յուսահատ մըմունջ անցաւ. Մութ անկինից գուրս եկաւ մէկը, չորեցոք մօտեցաւ, վիզը ծոեց և ասաց լացի ձայնով։

—Ես տեսայ. հալիձորցի թաթոսն սպանեց։ Ամրոխն օրհնեց այդ մարդուն, Բայց խանը աւելի սպատիկ գոռաց։

—Ո՞րն է, ո՞վ է այդ անպիտան շունը, դուրս բերէք, տուէք տեսնեմ . . .

Խեղգուած փսփոյը մատւ ամբոփի մէջ. Անցնում էին բողիներ, ծանր, աղէտալի բոսկներ. իւրաքանչիւր կապուած խեղգում էր, հոգի տալ էր պատրաստում. Ո՞րտեղից գտնեն Թաթսոխն։ Նա չը կայ, և այսքան մարդիկ գլուխ պիտի տան նրա

854-2010
40658

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

պատճառով: Դառնութեան ժամը մօտենում է և ամբոխը կծկում է անտանելի մորմոքների մէջ:

Բայց կապուած Մէլիք-Միհրանը առաջ է սողում, խօսում է: Խանը նստում է իր տեղը, կարճատե հանգստութիւնը քաղցրացնում է գետնատարած ամբոխի ըոպէները:

— Խան, գլխիդ ու արեկդ մատաղ, — ասաց Մէլիքը. — Խղճա մեղ, խեղճ ենք, ողորմելի ենք, քոծառաներդ ենք, նա այստեղ չէ, կորել է, Սստուածվկայ, սուտ չենք ասում: Եթէ այստեղ լինէք, ինքներս նրան կտոր կտոր կանէինք: Հրաման արա, էգուց կամ միւս օրը, երբ որ լինի, կը բռնենք նրան, ձեռքերը կապած ոտք կը բերենք:

— Տուն, տեղ ունի, — հարցրեց խանը մի քիչ ցած ձայնով:

Ամբոխի միջից մէկն իսկոյն պատասխանեց սիրտ առած.

— Ունի, կնիկ էլ ունի, մէկ էլ մի երեխայ, տամն ու շորս ամսական:

— Էգուց առաւօտ կը բերէք ինձ մօտ, — հրամայեց խանը: — Իւշ, Թափալարի մօտ, այնտեղ է մնացել իմ մարդկանց մեծ մասը. ոտարորիկ, գլխարաց կը բերէք... ես զիտեմ, թէ ինչ կանեմ... Եթէ, չեք ուզում, որ ձեր զիւղերը քարորդանդ անեմ, կը բերէք... Իւկ հիմա արիւնի դինը տուէք, երկու բռնը...

Վերջին խօսքի վրայ խանի ձայնը յանկարծ կտրուեց: Վերեխց, պարսպի գլխից, մի ահազին քար թուաւ, ընկաւ խանի գլխին: Նա ցած գլորուեց:

Թուրքերն իսկոյն վրայ վագեցին, բռնեցին խանին: Բայց նրա զլուխը բոլորովին ջարդուել էր:

Անհնարին սուզ ու շիւան ընկաւ բաղմութեան

մէջ: Աղաղակում էին ամենքը, ողբում էին, կըրծքները ծեծում:

— Երկինք, Աստուած, — պաղատում էր ամբոխը:

Մի սոսկալի ան գողացնում էր ամենքի ծնօտները. կարկամած լիզուները անհասկանալի ձայներ էին դուրս հանում: Խանը սպանուած էր... Բաղմութեան սիրտը պատուում էր...

Երկու թուրք փախան գէպի դռները, բայց այդ ժամանակ հինգ մարդ վազէվազ իշան եկեղեցու քարի սանդուղքներով:

— Թաթոսն է, Թաթոսն է. — Լեզպատառ գոչեցին մի քանիսը և վազեցին, որ բռնեն նրան:

Մնացածները լալով ասում էին.

— Քո տունը քանդուի, դու մեր տունը քանդեցիր, կրակ թափուի գլխիդ, այս ինչ բերիր մեր գլուխը:

Թաթոսը մի մեծ սուր ձեռքին ցատկեց, խարոյկի մօտ կանգնեց: Նրա ընկերներից մէկը մի սարսափելի, վայրենի աղաղակ հանեց բերանից. ամենքը գողացին այդ ձայնից, և ինքը, այդ մարդը, խելազարի պէս սկսեց արագ պտոյաներ գործել, դէս ու դէն թուչկոտալ. Նրա ձեռքում էլ կար մի մեծ սուր, որ անդադար շոշողում էր, երբ նա կրակին մօտենում էր: Դրան իսկոյն ճանաշեցին. ահազին փափախի տակ մտած մի մարդ էր, որ ունէր կարճիկ հասակ, բայց բաւական հաստ էր. զէմքը փոքր էր, թաւամազ. Նրա սոտինների առաջ մարդ չէր կարողանում կանգնել:

— Դաները փափած են, — զոռաց Թաթոսը. — ով որ հայ է, քրիստոնեայ է, թող որանցից մէկին սպանէ:

Բաղմութիւնը քարացել էր. «Թող ինքն անէ,

—լսուեցան այս ու այն կողմից ձայներ,—թող ինքն անէ, մենք արևատէր չենք, մենք նեղացած, չարշարուած ենք»:

Խարոյկի բոցը բարձրացաւ, Թաթոսի հետ եկած մարդիկ փայտ էին զարսում նրա վրայ: Առաջ գնաց Թաթոսը. նա տանում էր մի աւելորդ սուր ևս: Նա մօտեցաւ Աւթանդիլին: Խոնարհ ու հանդարտ կերպով նայեց նրան, գլուխը ցածրացրեց և սուրը մեկնեց նրան, կոթը դրաւ նրա ձեռքում, որ չուանով կապիսպած էր: Աւթանդիլը ընդդիմացաւ. Թաթոսը ուզում էր արձակել նրա ձեռքը կապանքից, բայց նա թոյլ չը առուց, կոնով գէն հրեց իրան մեկնած սրի կոթը: Բայց Թաթոսը չէր հեռանում, նա զարմացած նայում էր այդ իշխանին և աշխատում էր նրա տիսուր, յուսահատ գէմքի վրայ մի պատասխան կարդալ: Աւթանդիլը առաջ շարժուց սողալով, և Թաթոսը պատկառանքով ճանապարհ տուեց նրան: Աւթանդիլը խօսեց. նրա ձայնը տիսուր էր, սգաւորի ձայնի պէս էր:

—Մարդիկ, եթէ գժուել էք, այս գժին լսեցէք. բայց իմացէք, թէ էզուց մեր զլուխն ինչ կը դայ: Սրա զլուխը ծախուած է, պըծած: Խանի մարդիկ էզուց կը զան... էզուց կնիկ ու երեխայ գերի կը դնան Բարկուշատ: Ես արիւնի տէր չեմ, տեղից չեմ էլ շարժուի, կապանքներս չեմ էլ արձակի:

Եւ նա զլուխը կախ արած մի կողմն անցաւ, թուքերին մի ինչ որ բան ասաց:

—Անիծուի՞ դա, —զոշեց գերիների խումբը:

Թուքերը սրեր հանած, կանգնած էին: Նրանց և Թաթոսի հետ եկածների մէջ դեռ միայն հայնանքներ էին փոխանակուում: Բայց Աւթանդիլի

խօսքերից յետոյ, նրանք առաջ անցան և սուր շողացնելով վրայ թափուեցան: Թաթոսն իր ընկերների հետ խնայել չը գիտէր. սրի հարուածներ թափուեցան, և թուքերը յետ ու յետ գնացին: Թաթոսը սուրը բռնած ընկաւ ամբոխի մէջ:

—Կոտորեցէք դրանց, —զոռում էր նա և ձեռք ընկածին հարուածում էր սրի տափակոցով:

Էլի բարձրացաւ բազմութեան աղեկտուր հեծեծանքը:

—Խեղճ ենք, մեղք ենք, վայ... զոռգոռում էին այս ու այն կողմից:

Սարսափահար բազմութիւնը այս ու այն կողմ էր փախչում, վանքի ընդարձակ բակում մի անհնարին խառնակութիւն էր տիրել:

—Կոտորեցէք, —զոչում էր Թաթոսը սարսափելի ձայնով. նա կրծտացնում էր ատամները, նրա աշքերը արիւնով լցուել էին, տրաքւում էին:

Կարճիկ ու բրդու մարդն այդ միջոցին վերջացրել էր իր գործը: Թուքերը զինաթափ էին եղել և հաւաքուած մի անկիւնում լուռ ու մունջ իրանց դատաստանին էին սպասում: Եւ կարճիկ մարդը մօտեցաւ Թաթոսին, շարժում էր նրա հետ միասին. նա ոչինչ չէր խօսում, այլ միայն բարձրացած սուրը շարժում էր մարդկանց վրայ:

—Քարերով, քարերով, —լուռում էր Թաթոսի բոլորովին փոխուած ձայնը:

Սմբոխը ահից սարսափած, զողահար ընկաւ քարակոյտի վրայ, որ զիզուած էր այգտեղի ծւ ամեն մէկը, մի մի քար վերջնելով, վաղեց գէմքի թուքերը: Սրանցից մի քանիսը փախել էին պարսպի զլուով: Լսեցին, թէ ինչպէս աղաղակում էին նրանք.

«Ճուն գեաւուրները կատաղել են»: Մնացածները դեռ կանգնած էին:

Եւ քարերը կարկտի պէս թափուեցան մնացածների վրայ: Խսկ կարձլիկ ու հաստ վայրենին խրախուսում էր մարդկանց և իր սրի ծայրով մանրմանը հարուածներ էր տալիս ընկած թուրքերին: Նա, կասես, հանար էր անում:

Խարոյկը մարել էր. միայն կրակն էր քիչ լոյս տալիս իր շորս կողմին: Թաթոսը դեռ ու դէն էր վազում. նա կրակ էր կտրել: Նրա ոտք մի ինչոք բանի դիպաւ և նա հազիւ պահուեց վայր ընկնելուց: Նա ցած խոնահուեց և նայեց: Իր ստների տակ դեռ պառկած էր Աւթանդիլը: Հաստ չուսնը դեռ կապկապած էր նրա ձեռքերն ու ոռքերը: Մի սարուռ ընկաւ Թաթոսի երակների մէջ. մի ակրն-թարթում նա խղճաց նրան և կոացաւ, որ նրան բարձրացնէ: Բայց Աւթանդիլը գոռաց.

—Կորիր, աւազակ. մարդկանց տունը քանդել ես, իմն էլ ես ուզում քանդել. . .

—Քոլորին կոտսընեցին, —ասաց Թաթոսը գողառվ: Նա տուածին անզամն էր միծ մարդու հետ խօսում: Եւ աւելացրեց.

—Վեր կաց, իշխան, ընկնելուց ինչ օգուտ:

Աւթանդիլը երեսը շորու տուեց և լրեց: Թաթոսը գողգողառվ հեռացաւ նրանից, բայց էլի յետ դարձաւ:

—Մեռած մարդ, —գաշեց նա և իր սուրը բարձրացրեց: Սուրը սասակի թափով իջնել էր ուզում ընկածի ուսի վրայ, բայց Թաթոսի սրառում դարմանալի փոփոխութիւններ էին կատարում. մի վայրէ կեանում նա փոշմանկց, դէն տարաւ սուրը, մինչև անզամ մի վրայ հեռացաւ, բայց նորից յետ դար-

ձաւ և, խսնաբհուելով նրա վրայ, խորին զդուանքով թքեց նրա երեսին. գսզոցը այնպէս էր բանել նրան, որ նա չը կարողացաւ պահուել, և նրա սրի ծալը ծակեց իշխանի կողը:

Աւթանդիլը բղաւեց, նրա շուրջը հաւաքուեցան մարդիկ: Բայց Թաթոսը ուշակութիւն չը դարձրեց. նա հեռացաւ, որոնում էր միւս իշխանին: Բայց չը տեսաւ նրան և անցաւ վանքի փոքրիկ բակը:

Քիչ եւ անցաւ, ամեն ինչ վերջացաւ: Յոգնած, մի կարճ ժամանակում մաշուած մարդիկ հաւաքուեցան միասին, զառնութեամբ խօսում, աղազակում էին:

Հ.

Թաթոսը սաստիկ կաղում էր: Նրա ոտքն զիպել էր մի քար, և ցաւը, որ սկզբում զգալի չէր, այնքան սաստկացաւ, որ նա քաշուեց մի մութ տեղ երկար ժամանակ շփում, տրորում էր ցաւող ոտքը.

Բայց մի միտք շարունակ նրան տանջում էր: Այդ միտքը ոտի ցաւից զօրեղացաւ, և նա այլ ևս կարողացաւ դիմանալ նրան: Մի կերպ վեր կացաւ և, սաստիկ ոյժ գործելով իր վրայ, կաղէկաղ քարը ընկաւ դէպի արքեպիսկոպոսի սենեակը:

Մի լոպէ անցած, արքեպիսկոպոսը գրսումն էր:

—Մենք դեռ սրբութիւն չենք առել, չենք թաթախուել, հայր սուրբ, —ասաց Թաթոսը վշտակի ձայնով: —այս մարդիկն էլ խեղճ են... չայ քրիստոնեայ ենք...

Սըքեպիսկոպոսը հրաման տուեց, որ կիսատ
մնացած ժամը նորից սկսեն:

—Մա էլ չի թաթախուել, բայց ինչ տղամարդ
է, —շարունակեց Թաթոսը և մէկի կռնից բըն-
նած՝ խաւարի միջից առաջ քաշեց: —Մըան կը հաս-
նէ մեծ բաժինը.

Դա նոյն կարճիկ և հաստ աղամարդն էր: Նա
ձեռքում դեռ բռնած էր մերկ սուրբ և ծիծա-
զում էր:

—Օրհնուած Փարսադան, արի ձեռքս համրու-
րիր է...

Փարսադանը մօտեցաւ, բռնեց սրբազանի աջը,
դէպի իրան քաշեց և առաջ ճակատը դրեց ձեռքի
վրայ ու յետոյ բարձր չըմփացնելով համբուրեց ձեռ-
քը և խկոյն յետ կանգնեց:

Թաթոսի դէմքը փայլում էր ուրախութիւնից:
Ո՞րտեղից էր նրա մէջ այնքան համարձակութիւն
հաւաքուել, նա բարձր էր պահում իր գլուխը, բռ-
լուզովին մտից դցել էր իր ոտք և ժպիտը բերանին
ասաց.

—Ճնտա արա, հայր սուրբ, շուտ արա. Թիքա
չենք դրել բներաններումս. մեղ սրբութիւն տուր:

Սըքեպիսկոպոսը ճրագի լուսով նայեց նրան,
կարծես նա նոր ճանաչեց, թէ ով է այդպէս խօսողը,
և գառնալով իրան շրջապատող մարդկանց, ասաց.

—Մըան նայեցէք: Մա չէ Թաթոսը:

Սըքեպիսկոպոսը մեկնել էր իր ձեռքը դէպի
Թաթոսը. Մա վերցրեց իր փափախը և դողալով
ասաց.

—Ճառագ եմ, հայր սուրբ:

Նա իր բերանը արքեպիսկոպոսի ձեռքին մօ-
տեցնել էր ուզում, բայց այդ ձեռքը յետ քաշուեց

և նա սառած մնաց: Խոկոյն մի ուրիշ բան էլ հա-
րուածեց նրան. նա լսեց արքեպիսկոպոսի վճռական
խօսքերը.

—Քեզ սըբութիւն չի հասնի, դու մարդասպան
ես, քանիսին այս երեկոյ սպանեցիր: Բոլորի արիւնը
քեղանից պիտի պահանջուի:

—Արժանի է, արժանի է այդ պատժին,—ասա-
ցին բոլոր մարդիկ:

Նրան դեռ անիծում էին, դեռ հայհոյում էին...

Կարծես Երրորդութեան սիւնը *), որի մօտ
կանգնած էին ամենքը, փուլ եկաւ, ընկաւ Թաթոսի
գլխին: Նա պապանձուեց, մի խօսք անգամ շասաց
և յետ գնաց:

—Դրան ես էգուց կը բռնեմ,—ասաց Մէլիք-
Միհրանը հպարտ ձայնով և գնաց սրբազանի ետևից:

¶.

Գիշերից բաւական անցել էր: Վանքից լսում
էր երգեցողութեան ձայնը. քշոցները բարակ ձայն
էին հանում. բուրգառները մեղմ չըխկում էին Աստու-
ծու սեղանի առաջ: Բակում մարդ չէր երևում. մի-
միայն Թաթոսն էր նստած Երրորդութեան սիւնի տակ:

Դիշերը անցնում էր խաղաղ, Անհամար ասա-
դերը ճպճպում էին երկնքի երեսին: Օդը մրսաց-
նում էր, քամին երլեմն հասնում էր պարսպի տակ
կանգնած մենաւոր ծառի ճիւղերին և տիսուր ու
դանդաղ օրօրում էր նրա ճիւղերն ու տերենները: Աստղերից մի քանիսը բարձրացան, ահա հասնում
են երկն ակամարի մէջտեղը: Նրանք հետզհետէ շա-

*) Տաթեւի հռչակաւոր շարժուն քարէ սիւնը:

տանում են և նրանց անսահման շարքերը փալվում են, աղօտ լոյս են զցում աշխարհի վրայ:

Աստուած մարդը նստած է: Ոտի ցաւը աւելի ևս սաստկացել է, նա երբեմն չի դիմանում անտանելի ցաւին և ծանր ու խեղզուած անքոցներ է հանում իր սրտից: Նա մենակ է, արտաքսուած: Նա մոռացել է ամեն ինչ, որ արել է, նա չը գիտէ անգամ, որ այդ ժամին, այդ ըստէին, վանքի մեծ բակում գետնի վրայ փռուած են բազմաթիւ դիմակներ: Նա չը գիտէ, չի համկանում ոչ մի բան. նրա ամբողջ միտքը իր տանն է, իր երեխայի մօտ: Նրա աշքի առաջ էր այն օրը, երբ երեխան դիմակի պէս ընկած էր շորերի վրայ. մայրը եղունգներով պատառում էր իր դէմքը, այնպէս լաց էր լինում, որ մարդու սիրտն էր կտրատում: Ահա հաւաքը են ընկեր հարեաններ. լեռնային այն հեռու ընկած, մոռացուած անկիմում երեք չսրս հովուական ընտանիքներ են միմեանցից հեռու տալլում: Բայց մահուան զրկում գտնուող երեխան մօտեցրել է բոլորին և ամենքը վազում են հօր ու մօր սիրտը մխիթարելու: Այն ինչպիսի ժամ էր: Ինքը, հայրը, թողնում է իր տունը, որ քանդուել է ուզում լացի ձայներից, վազում է իր ոչխարի մօտ: Կարծես այժմ էլ նա թոշում է քարից քար, վազում է ժայռերի սրածայր գլուխների վրայ, ցատկում է խոր ձորերի մէջ, ճանապարհ է կարճում, շուտ է համում ոշխարի հօտին: Եւ նրա սիրտը դեռ չի ճաքուել, երբ վազվազերով նորից համում է իր տունը: Ճալակած ոշխարը հանդարտ է, չի շարժում, մորթածի պէս է: Սիրտը հանգստանում է. Աստուած ընդունում էր... նա ուզում է շուտ համնել կնոջը, շուտ իմաց տալ, որ նշանը բարի է: Եւ ներս ընկնելով իր տու-

նը, նա տեսնում է, որ երեխան դեռ շունչ ունի: Ոչխարը դնում է նրա գլխի մօտ, հանում է հովուական դանակը, և մատաղի արթիւնը մի ակնթարթում կարմիր է ներկում հողը: Գալիս է գիշերը, հարեանները ցըում են. նա նստած է դրսում, նայում է երկնքին, նայում է աստղերին, նրա ոտների մօտ ընկած են հաւատարիմ չները, հեռու տեղից զալիս է գետի խուլ վշշոցը: Եւ այդ ժամանակ, աստղերի տակ նստած, աշքերը դէպի երկինք դարձրած, անքուն մնացած հովիւը ուխտ է կապում Աստուծու առաջ...

Անցնում է գիշերը, անցնում են գիշերներ: Երեխան լաւանում է... Գալիս է ուխտի օրը: Ինչպէս խիստ ցաւում է ուաը... Տէ՛ր Աստուած, անկատար մնաց ուխտը... Նա նստած է այստեղ, նա հեռու է իր տանից, և Քրիստոսի Զատիկ գիշերը անցնում է...

Արաւասունքը ծլում է թաթոսի աշքերից: Նա խեղդում է հեկեկանքները, չի թոյլ տալիս, որ նրանք գուրս թռչեն կրծքից և լսելի դաւնան այս լուռ և խաղաղ բակում... Նա բռնում է չուխայի փէշը. նրանով սրբում է աշքերը և գարձեալ ողբում է լուռ, ողբում է անձայն...

Ահա վերջացաւ ժամը, Մարդիկ գուրս են թափում, գնում, ցըում են լուռ, վշտահար: Խօսք ու զրոյց չը կայ, շտապում են մի թիքայով թաթախուել, քրիստոնէական պարտքը կատարել ու իրանց վշտացած սրտներին հանգիստ տալ քնի մէջ:

Անցաւ արքեպիսկոպոսը, մտաւ վանքի սեղանատունը, նրան հետեւում են մարդիկ: Սեղանատան դուռը բոլորովին մօտ է թաթոսին. նա լսում է, թէ ինչպէս արքեպիսկոպոսը օրհնում է, բաժանում է նշխարը: Ամենքը սպաւոր են, ամենքը խօսում են

մեռնողի նման: Եւ չը կայ մէկը, որ ուշադրութիւն դարձնէ մոռացուած օտարականի վրայ: Արտասունքն է մնացել այդ արտաքսուած խեղճի ընկերը. իսկ այնտեղ թաթախում են:

Զատ չը քաշեց թաթախումը: Ազքեալիսկոպոսը դուրս եկաւ. նրան է նայում Թաթոսը: Նա հանեց մի մեծ կտոր նշխարք, տուեց ժամկոչին և հրամայեց.

—Տաթ Աւթանդիլ տանուտէրի մօտ:

Ժամկոչը գնաց, իսկ արքեալիսկոպոսը անցաւ Թաթոսի մօտով: Նա տեսաւ ընկածին, որ շարունակ իր ոտն էր շփում մի ձեռքով, և հեռացաւ նրանից:

—Ի՞նչպէս է Աւթանդիլը, սրբազն, —հարցրեց մէկը:

—Վէրքը կապել են... Անիծուի...

Նա մտաւ իր խուցը և վերջին խօսքը կիսատ մնաց, բայց Թաթոսն իմացաւ, որ իրան էին անիծում:

Եւ նա դարձեալ մենակ, անօդնական մնաց: Չուտով քունը հանգստացրեց ամենքին: Մի ծանր թմբութիւն է գալիս Թաթոսի վրայ: Բայց նա քննել չի ուզում: Եւ ամեն անգամ, երբ բաց է անում աշքերը, յիշում է անկատար մնացած ուխտը և հառաջում է, մտաքերում իր հեռաւոր տունը և նրա մէջ ապրողներին:

Բայց գիշերը արթոն մնացողի ցաւակիցը չէ. Նա արագ անցնում է, նրա անհամար աստղերը հետղիեաէ կուլ են գնում սարերի գլխին:

Աղօթարանը բացում է. մի ինչ-որ բան այնտեղ վառում է, և երկնքի կտորը, որ այդ տեղի վրայ է տարածուած, լուսաւորում է, պայծառ և պայծառ է դառնում: Լոյս-Աստղը կանգնած է այդ

լուսաւոր աղօթարանից բարձր և փալփլում է իր ամբողջ գեղեցկութեամբ:

Վանքի խուցերում շարժուեցան մարդիկ... Առաւօտը մօտենում է:

Ազքերը մի անգամ էլ բաց արաւ Թաթոսը: Այս անգամ մի մարդ կանգնած էր նրա ետեւում և ձեռքը դրել էր նրա ուսին:

—Տնաշէն, ի՞նչ ես սպաել, —ասաց այդ մարդը: Թաթոսը յետ նայեց և ծանր կերպով ասաց.

—Փարսադան...

—Դալի-Փարսադան, —ուղղեց կանգնածը:

Թաթոսը վեր կացաւ:

—Սատանի-Կամբջից եմ գալիս, —ասաց Փարսադանը. —մեր տղիրքը լուր բերին, որ թուրքերը պիտի գան: Ֆնանք...

—Ցղերքը, —հարցրեց Թաթոսը զարմացած:

Փարսադանը չափից դուրս ուրախ էր, նրա լայն բերանը շարունակ ծիծաղում էր:

—Այդ ի՞նչ ես գալիս, Փարսադան, —հարցրեց Թաթոսը. —Ես քեզ ոչ մի ժամանակ այդպէս չեմ տեսել.

—Դալի-Փարսադանն այս գիշեր չի քննել: Մարդ շատ ունինք, գնանք... Ամենքը Սատանի-Կամբջի վրայ են:

Թաթոսը ասելու խօսք չէր գտնում:

—Այսօր մի լաւ բան պիտի տեսնենք: Ցաքուտից գես թէ որ անցան թուրքերը, մեր մարդկանց մի պիտի Սատանի-Կամբջից ցած գցեմ...

Նա մի ձեռքով բռնեց Թաթոսի գօտուց և Թափահարեց նրան:

—Բան չի մնացել ինձանուս, —պատասխանեց Թաթոսը դառնացած: —Անմանանայ եմ...

Փարսադանը կուռը զցեց նրա վզով:

—Եյօր,—ասաց նա, —գործը վերջացնելուց
յետոյ լաւ քէֆ ունինք:

—Բայց մենք քրիստոնեայ չենք, Փարսադան.
Զատիկի է, և զեռ չենք թաթախուել:

Փարսադանը ձեռքը տարաւ իր գրպանը, մի
կարմիր ձու հանեց:

—Երեկուանից մոռացել եմ, գրպանումս թո-
ղել, —ասաց նա, ձուն մեկնելով Թաթոսին: Զուն
փշուած էր, ջարդուած:

—Բայց առանց Զատիկի խօսքի...

Փարսադանը նորից խտաեց նրան և ասաց.

—Քրիստոս յարեաւ...

Նրանք համբուրուեցան: Այդ բոպէին հնչեց
վանքի զանգակը: Առաւտեան ժամը սկսում էր:

—Օքնեալ Սստուած... պատասխանեց Թա-
թոսը և ձախ ձեռքով երեսը խաչակնեց:

—Գնանք, —նորից կրկնեց Փարսադանը:

Թաթոսը շտապով կճպեց ձուն և կծեց:

—Քեզ համար մի լաւ ձի մենք ճարիլ, Թաթոս:

—Գնանք, եղբայր:

Նրանք միմեանց խտած՝ զնացին:

Մէլիք-Միհրանի զրանը կապած էին երկու
արջառները. ժամկոչը շուռ էր տալիս նրանց մօտ,
կարգադրում էր, որ շուտ մորթեն: Թաթոսն ու
Փարսադանն անցան նրանց մօտով:

—Եսկ սրանք, իշխանները, —հարցրեց Թաթոսը:

—Դրանք մատաղի մարդիկ են, —պատասխանեց
Փարսադանը և արագացրեց իր քայլերը, քարչ տա-
լով Թաթոսին:

—Սպասիր, եղբայր, այսօր ինձ պիտի բռնեն:
Փարսադանը կանգ առաւ:

—Ո՞վ:

—Մէլիք-Միհրանը երդում էր, դու չը լսեցիր,
երկու անգամ:

Փարսադանը բարձր ձայնով ծիծակեց:

—Թանգ իրանց գլուխները պահեն, բաւական
է, —ասաց նա և էլի սկսեց քարչ տալ Թաթոսին:
Սա, ինչպէս երկում էր, յօժարութեամբ չէր գնում.
Երեսում էր, որ մի բան նրան պահում էր, չէր թոյլ
տալիս հեռանալ:

—Փարսադան, —էլի կանչեց Թաթոսը, և նրանք
էլի կանգ առան: —Փարսադան, դու տանուտէր կը
դառնամս, հարցրեց նա:

Կարճիկ մարդը մի վայրենի հայեացք ուղղեց
նրան և բեմի տակ վնիթվնիթաց:

—2ին թողնիլ, որ մի օր գոնէ ուրախ լինենք:
Տօ, դու տեսել ես, որ Դալի-Փարսադանը կնիկ դառ-
նայ...

Թաթոսը սիրտ տուաւ. երջանիկ ժպիտը խա-
զում էր և նրա զէմքի վրայ:

Արշալոյսը մոյգ մոյկ կարմիրներ էր թափում
լեռների հակատին. Այդ երկու մարդիկ կանգնած
էին Տաթենի սարի լանջվայրի ծայրին: Նրանց ա-
ռաջ փուտած էր Որոտնայ զետի հսկայական ձորը:
Այնտեղ, խոր և խոր յատակում դեռ մութ էր և Ռ-
բոտանը աւելի սաստիկ էր որոտում: Նրա ձորի միւս
կողմում, Սատանի-Կամուրջից դէն, մի փոքրիկ
թումբի վրայ կանգնած էր Ցաքուտի հին, աւերակ
եկեղեցին: Եկեղեցու շուրջը նոյնպէս տարածուել էր
արշալոյսի կարմրութիւնը. և այդ գեղեցիկ կարմրու-
թեան մէջ երեսում էին բազմաթիւ մարդիկ: Ծուլքը
բարձրանում էր այդ տեղից և սիւնացած էր առա-
ւտեան սառն ու քնքոյց օդի մէջ:

Դալի-Փարսադանը կանգնած էր Թաթոսի մօտ.
մի ձեռքով բռնել էր նրա թեր, միւս ձեռքը մեկնել
էր դէպի հին, աւերակ եկեղեցին: Նա լուռ ծիծա-
ղում էր, լուռ ցոյց էր տալիս մարդկանց խումբը: Ար-
շալոյսը երկուսի դէմքը ծեփեց իր կարմիր լուսով:
— Հա, ես մոռացել եմ. մեր տղերքը հիմա մա-
տաղ պիտի անեն,— ասաց Փարսադանը.— Երկու լաւ
ոչխար ունինք: Կը մորթենք այն ժամանակ, երբ
արեգակը իր մատաղը կը մորթէ *):

Ուրախութեան աղաղակ գուրս թռաւ Թաթո-
սի կրծքից: Նա մի ակնթարթում կերպարանափո-
խուեց. Նրա ուսերից մի ինչ-որ ծանրութիւն ընկաւ:
Նա բռնեց Փարսադանի թեր և զոչեց.

— Գնանք, շուտ գնանք...

Նրանք դէպի ցած վաղեցին, դէպի Սատանի-
կամուրջը, և երեխաների պէս ուրախ ուրախ ճղա-
ռում էին, պարում էին...

Նրանց առջել կար մատաղ և կոտորած...



*) Մեր Ժողովուրդը հաւատում է, որ Զատիկ կիրակի
առաւտուր արեգակը, դուրս գտնուց և քիչ բարձրանալուց
յետոյ, ինքն էլ մորթում է իր զատկական մատաղը

ՀՀ Ազգային գրադարան



NL0666838

